Արձանագրություն 4

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-23/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.11.2023թ. ժամը 12:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Մ. Տեր-Հովհաննեսյան – ՖՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի անդամներ

Ա. Մարտիրոսյան – ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Հ. Ղազարյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Ա. Ղազարյան - ՖՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Ա. Սարգսյան – ՖՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

1. Տեղեկություններ հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ

1. ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավերով սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) շտկել է հայտում առկա անհամապատասխանությունները, բացառությամբ առաջադրված մասնագետ Շանթ Ալճյանի դիպլոմի, որը ներկայացված չէր հայերեն լեզվով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1. ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի հայտով առաջադրված մասնագետ Շանթ Ալճյանի թեկնածությունը մերժել, մյուս 3 մասնագետների թեկնածությունները գնահատել բավարար:

2. ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

3. Մասնակցին տրվող գնահատականը (ՄԳ)-ն սահմանել 84:

4. Ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին

Հաղթող մասնակցի հետ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն (անգործության ժամկետ կիրառելի չէ) կնքվելու է գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Տեր-Հովհաննեսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Մարտիրոսյան

_____ Հ. Ղազարյան

_____ Ա. Ղազարյան

_____ Ա. Սարգսյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան